ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հուլիսի 2026 թ. N 247-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 2-ՐԴ ՇԵՆՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԸ ԵՎ ՀԱՐԹԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Լարիսա Մակեդոնի Վարդազարյանի կողմից լիազորված անձ Արարատ Հմայակի Խաչատրյանի դիմումը (մտից N 1126, 03.07.2026 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 2-րդ շենքի հարևանությամբ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 41,3 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 22,1 քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ շինությունը՝ 5,4 քմ, հարթակը՝ 15,8 քմ, ընդհանուր՝ 21,2 քմ) հասարակական նշանակության շինությունը (խանութի մի մասը և հարթակը, այսուհետ՝ շինություն) համարել Ջերմուկ համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական. ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2026JLZEBE:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

ա) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

գ) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ձախափնյակ թաղամաս N 2/3 առևտրի սրահ:

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Լարիսա Մակեդոնի Վարդազարյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հուլիսի 31
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հուլիսի 2026 թ. N 248-Ա

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 87-Ն որոշման, հաշվի առնելով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության ներկայացուցիչ Կիմա Մելքոնյանի՝ էլեկտրոնային հարթակով ս/թ մարտի 25-ին մուտքագրված ՇԹԴ/699/6158-26 դիմումը (մտից՝ 2026 թվականի հուլիսի 31-ի N 1321)՝ ***որոշում եմ՝***

1. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերությանը Ջերմուկ համայնքի ղեկավարի կողմից 2024 թվականի ապրիլի 17-ին տրված N 3 շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգել մինչև 2028 թվականի ապրիլի 17-ը:

2. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ընկերությունը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին մուծել 240000 (երկու հարյուր քառասուն հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության ժամկետի երկարաձգման համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հուլիսի 31
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հուլիսի 2026 թ. N 249-Ա

ԿԱՄՈ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ N 10/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 23.1-ին կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով, Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 87-Ն որոշման, հաշվի առնելով Կամո Մելքոնյանի՝ 2026 թվականի հունիսի 10-ին էլեկտրոնային հարթակում մուտքագրված ՀՆ/3815-26 դիմումը (մտից՝ 2026 թվականի հուլիսի 31-ի N 1322) և «ՍՏ ԱՐՏ» ՍՊ ընկերության Ե-4391/2025 երաշխավորագիրը՝ ***որոշում եմ***՝

1. Համաձայնություն տալ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2025 թվականի հոկտեմբերի 17-ին տրված N ՎՋ-4391/2025 տեխնիկական պայմանի ուղեգծով հետագիծ-նախագծային փաստաթղթերին և Նոր Հաճն համայնքի Քարաշամբ գյուղի բնակիչ Կամո Մելքոնյանին տրամադրել Ջերմուկ քաղաքի Երևանյան խճուղու N 10/3 հասցեում գտնվող սեփական հողամասում արտաքին ջրամատակարարման աշխատանքներ կատարելու շինարարության թույլտվություն:

2. Կամո Մելքոնյանը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին վճարել 3000 (երեք հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:

3. Շինարարական աշխատանքները կատարելիս անհրաժեշտ է տեղեկացնել «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Վայոց ձորի ճանապարհային ոստիկանությանը և մյուս շահագրգիռ կազմակերպություններին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կամո Մելքոնյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հուլիսի 2026 թ. N 250-Ա

ՊԱՐՈՒՅՐ ԲԱԴԱՍՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Պարույր Սամվելի Բադասյանի՝ 2026 թվականի հուլիսի 16-ին էլեկտրոնային հարթակում մուտքագրված ՃՀԱ/705/20594-26 հայտը՝ (մտից N 1323, 31.07.2026 թ.)՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Մաշտոցի փողոց 4-րդ փակուղի 23/1 հասցեում գտնվող հողամասի (կադաստրային ծածկագիրը՝ 10-002-0029-0108) վրա երկհարկանի բնակելի տուն կառուցելու համար նախագծանախահաշվային փատաթղթերի մշակման նպատակով Ջերմուկ քաղաքի բնակիչ Պարույր Սամվելի Բադասյանին տալ նախագծման թույլտվություն:

2. Պարույր Սամվելի Բադասյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պարույր Սամվելի Բադասյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հուլիսի 31
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 օգոստոսի 2026 թ. N 251-Ա

ՍԱՐԳԻՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն և Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 87-Ն որոշումների, հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Սարգիս Անուշավանի Հովսեփյանի՝ էլեկտրոնային հարթակով ս/թ հուլիսի 29-ին ներկայացրած ՇԹԴ/699/19181 դիմումը (մտից՝ 2026 թվականի հուլիսի 29-ի N 1303)՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ քաղաքի բնակիչ Սարգիս Անուշավանի Հովսեփյանին տրամադրել Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի 4-րդ փողոցի N 4/1 հասցեում գտնվող հողամասի (կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0030-0030) վրա մանսարդային հարկով մեկհարկանի բնակելի տուն կառուցելու շինարարության թույլտվություն:

2. Սարգիս Անուշավանի Հովսեփյանը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին մուծել 15000 (տասնհինգ հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության տրամադրման համար:

3. Կառուցապատողը շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սարգիս Անուշավանի Հովսեփյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 3
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 օգոստոսի 2026 թ. N 252-Ա

ԴԱՎԻԹ ԱԶՆԱՈՒՐԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին» N 88 որոշմամբ հաստատված կարգի N 1 հավելվածի դրույթներով, հաշվի առնելով Դավիթ Ազնաուրի Թադևոսյանի դիմումը (մտից N 1297, 28.07.2026 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Թույլատրել Դավիթ Ազնաուրի Թադևոսյանին (նույնականացման քարտ՝ 016355836, տրված՝ 31.07.2024 թ., 035-ի կողմից) փոխելու սեփական բնակելի նշանակության անշարժ գույքի՝ Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 8-րդ շենքի N 44 հասցեում գտնվող բնակարանի (մակերեսը՝ 51,8 քմ, սեփականության իրավունքի N 06062025-10-0019 վկայական) գործառնական նշանակությունը որպես հասարակականի՝ տարածք (հանրային սննդի օբյեկտ):

2. Դավիթ Ազնաուրի Թադևոսյանին տրամադրել նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք):

3.Դավիթ Ազնաուրի Թադևոսյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի գործառական նշանակությունը հասարակականի փոփոխելուց հետո այն դուրս բերել Ջերմուկ համայնքի բնակարանային ֆոնդից:

5. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դավիթ Ազնաուրի Թադևոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ օգոստոսի 3
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 օգոստոսի 2026 թ. N 253-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի N 196-Ա ԵՎ N 197-Ա, ՀՈՒԼԻՍԻ 28-Ի N 234-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին և 34-րդ հոդվածին համապատասխան, հաշվի առնելով ՀՀ Կադաստրի կոմիտեի՝ Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին Կ–03082026-10-0227, Կ-10072026-10-0181 և Կ-09072026-10-0283 որոշումները՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 1-ի «Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0,03064 հա մակերեսով հողամասը որպես առանձին միավոր ճանաչելու, հասցե տրամադրելու և համայնքային սեփականություն գրանցելու մասին» N 196-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ. որոշման վերնագրում և 1-ին կետում «0,03064» թիվը փոխարինել «0,00306» թվով, իսկ որոշման 1-ին կետում նշված «2026NEFJGW» չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրը՝ «2026M8J3YQ» ծածկագրով:

2. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0,09776 հա մակերեսով հողամասը որպես առանձին միավոր ճանաչելու, հասցե տրամադրելու և պետական սեփականություն գրանցելու մասին» N 197-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն. որոշման 1-ին կետում նշված «2026MUL3MG» չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրը փոխարինել «2026H9EGB7» ծածկագրով:

3.Ջերմուկ համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 28-ի «Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0,00845 հա մակերեսով հողամասը որպես առանձին միավոր ճանաչելու, հասցե տրամադրելու և պետական սեփականություն գրանցելու մասին» N 234-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն. որոշման վերնագրում «ՊԵՏԱԿԱՆ »բառը փոխարինել «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ» բառով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 3
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 օգոստոսի 2026 թ. N 254-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ Մ. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ 9-ՐԴ ՇԵՆՔԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՏԵՂԱՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, հաշվի առնելով Երևան քաղաքի բնակիչ Աղասի Գերասիմի Հարությունյանի դիմումը (մտից N 1236, 20.07.2026 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Մ. Ստեփանյան փողոցի 9-րդ շենքի հարևանությամբ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 24,7 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 24,7 քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 17,1 քմ) հասարակական նշանակության շինությունը (խանութ) համարել Ջերմուկ համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական. ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2026RZCVDM:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

ա) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

գ) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Մ. Ստեփանյան փողոց N 30/1:

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ կառույցն իրականացրած Երևան քաղաքի բնակիչ Աղասի Գերասիմի Հարությունյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2026 թ. օգոստոսի 3
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 օգոստոսի 2026 թ. N 255-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՅԳՈՒ ՏԱՐԱԾՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՉԱՓԱԳՐՄԱՄԲ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՄԵԿ ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱԿՏՈՐԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հիման վրա և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48.1 հոդվածին համապատասխան, հիմք ընդունելով Հայաստանի Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ հաստատված Կարգի 46.2 կետի «ա» ենթակետը և Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 21-ի N 58-Ա որոշումը և հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Վարուժան Մակեդոնի Սարգսյանի դիմումը (մտից N 1272, 18.08.2025 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ քաղաքի քաղաքային այգու տարածքի ընդհանուր օգտագործման հողամասերից չափագրմամբ առանձնացված համայնքային սեփականություն հանդիսացող 1 (մեկ) քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակությամբ ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողակտորը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրել Ջերմուկ քաղաքի բնակիչ Վարուժան Մակեդոնի Սարգսյանին:

2. Սահմանել՝

- *Կառուցապատման իրավունքի տրամադրման ժամկետը մինչև՝ 05.08.2030 թ.:*
- *Կառուցապատման իրավունքի տրամադրման վճարի չափը՝ ամսական 1000 (հազար) դրամ՝ 1 քմ–ի համար՝ ամառային ամիսների համար, և ամսական 500 (հինգ հարյուր) դրամ՝ տարվա մյուս ամիսների համար՝ անկախ գործունեության ծավալումից (վարձավճարը վճարվում է պայմանագրի կնքման օրը՝ տարեկան հաշվարկով)*
- *Կառուցապատման իրավունքի տրամադրման նպատակը՝ խաղասարք տեղադրելու համար:*

3. Վարուժան Մակեդոնի Սարգսյանի հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման (հողօգտագործման) պայմանագիր:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարուժան Մակեդոնի Սարգսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 4
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 օգոստոսի 2026 թ. N 256-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՅԳՈՒ ՏԱՐԱԾՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՉԱՓԱԳՐՄԱՄԲ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 3,3 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱԿՏՈՐԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հիման վրա և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48.1 հոդվածին համապատասխան, հիմք ընդունելով Հայաստանի Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ հաստատված Կարգի 46.2 կետի «ա» ենթակետը և Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 21-ի N 58-Ա որոշումը և հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Կարեն Աշոտի Ջազյանի դիմումը (մտից N 1271, 18.08.2025 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ քաղաքի քաղաքային այգու տարածքի ընդհանուր օգտագործման հողամասերից չափագրմամբ առանձնացված համայնքային սեփականություն հանդիսացող 3,3 քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակությամբ ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողակտորը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրել Ջերմուկ քաղաքի բնակիչ Կարեն Աշոտի Ջազյանին:

2. Սահմանել՝

- *Կառուցապատման իրավունքի տրամադրման ժամկետը մինչև՝ 05.08.2030 թ.:*
- *Կառուցապատման իրավունքի տրամադրման վճարի չափը՝ ամսական 1000 (հազար) դրամ՝ 1 քմ–ի համար՝ ամառային ամիսների համար, և ամսական 500 (հինգ հարյուր) դրամ՝ տարվա մյուս ամիսների համար՝ անկախ գործունեության ծավալումից (վարձավճարը վճարվում է պայմանագրի կնքման օրը՝ տարեկան հաշվարկով)*
- *Կառուցապատման իրավունքի տրամադրման նպատակը՝ խաղասարք տեղադրելու համար:*

3. Կարեն Աշոտի Ջազյանի հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման (հողօգտագործման) պայմանագիր:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Աշոտի Ջազյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 4
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 օգոստոսի 2026 թ. N 257-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՅԳՈՒ ՏԱՐԱԾՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՉԱՓԱԳՐՄԱՄԲ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 17 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱԿՏՈՐԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հիման վրա և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48.1 հոդվածին համապատասխան, հիմք ընդունելով Հայաստանի Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ հաստատված Կարգի 46.2 կետի «ա» ենթակետը և Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 21-ի N 58-Ա որոշումը և հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Թեհմինե Զորիկի Զոհրաբյանի դիմումը (մտից N 1270, 18.08.2025 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ քաղաքի քաղաքային այգու տարածքի ընդհանուր օգտագործման հողամասերից չափագրմամբ առանձնացված համայնքային սեփականություն հանդիսացող 17 քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակությամբ ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողակտորը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրել Ջերմուկ քաղաքի բնակիչ Թեհմինե Զորիկի Զոհրաբյանին:

2. Սահմանել՝

- Կառուցապատման իրավունքի տրամադրման ժամկետը մինչև՝ 05.08.2030 թ.:
- Կառուցապատման իրավունքի տրամադրման վճարի չափը՝ ամսական 1000 (հազար) դրամ՝ 1 քմ–ի համար՝ ամառային ամիսների համար, և ամսական 500 (հինգ հարյուր) դրամ՝ տարվա մյուս ամիսների համար՝ անկախ գործունեության ծավալումից (վարձավճարը վճարվում է պայմանագրի կնքման օրը՝ տարեկան հաշվարկով)
- Կառուցապատման իրավունքի տրամադրման նպատակը՝ փոքրածավալ առևտրի կետ տեղադրելու համար:

3. Թեհմինե Զորիկի Զոհրաբյանի հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման (հողօգտագործման) պայմանագիր:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Թեհմինե Զորիկի Զոհրաբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 4
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 օգոստոսի 2026 թ. N 258-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 403-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով «Զինվորական ծառայության և զինծայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 3-րդ մասի, ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված կարգի 12-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Ջերմուկ համայնքի ղեկավարի 2021 թվականի հունիսի 23-ի N 257-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին» N 403-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

ա/ որոշման վերնագրում «ՃԱՆԱՉԵԼՈՒ» բառից հետո ավելացնել «ԱՆՆԱ ՍԱՄՎԵԼԻ ԱԹԱՆՅԱՆԻՆ ԵՎ ԻՐ ԴՈՒՍՏՐԵՐԻՆ՝ ԱՆԻ ԵՎ ՄԻԼԵՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ» բառերը,

բ/ ավելացնել 1.1 կետ՝ հետևյալ բովանդակությամբ՝ «1.1. Աննա Սամվելի Աթանյանին և իր դուստրերին՝ Անի և Միլենա Համազասպի Մարգարյաններին հանել բնակարանային պայմանների բարելավման հաշվառումից»:

2. Սույն որոշման ընդունման վերաբերյալ 10-օրյա ժամկետում Վայոց ձորի մարզպետարանի միջոցով գրավոր տեղեկացնել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը և շահառուներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աննա Աթանյանին և Անի և Միլենա Մարգարյաններին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 5
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 օգոստոսի 2026 թ. N 259-Ա

ԺՈՐԺ ՎԱՐԴԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Երևան քաղաքի բնակիչ Ժորժ Վարդանի Խաչատրյանի դիմումը (մտից՝ N 1311, 30.07.2026 թ.) ***որոշում եմ՝***

1. Երևան քաղաքի բնակիչ Ժորժ Վարդանի Խաչատրյանին սեփականության իրավունքով (հիմք՝ սեփականության իրավունքի վկայական N 2165421, տրված՝ 10.01.2006 թ.) պատկանող Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան փողոցի վրա գտնվող անշարժ գույքին՝ շինությանը, տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Մյասնիկյան փողոց N 5:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 6
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 օգոստոսի 2026 թ. N 260-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի N 99-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին և 34-րդ հոդվածին համապատասխան՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2026 թվականի ապրիլի 15-ի «Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0,06661 հա մակերեսով հողամասը որպես առանձին միավոր ճանաչելու, հասցե տրամադրելու և համայնքային սեփականություն գրանցելու մասին» N 99-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն. որոշման վերնագրում և 1-ին կետում «0,06661» թիվը փոխարինել «0,006661» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 6
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 օգոստոսի 2026 թ. N 261-Ա

ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՀԱՅՐԱՊԵՏ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾՎԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի՝ ***որոշում եմ***՝

1. 2026 թվականի հունվարի 1-ից լուծված համարել Ջերմուկ համայնքի և Գնդեվազ գյուղի բնակիչ Հայրապետ Մկրտչյանի միջև 2023 թվականի դեկտեմբերի 25-ին կնքված շարժական գույքի (Беларус 82.1 մակնիշի անիվավոր տրակտոր, խոտի մամլիչ և խոտ հավաքող 5-Մ (3 միավոր) մեքենա-մեխանիզմներ) վարձակալության պայմանագիրը՝ նշված գույքի՝ համայնքի կարիքների համար օգտագործելու անհրաժեշտությամբ պայմանավորված:

2. Սույն որոշման 1-ին կետի հիմքով չեղարկել վճարվելիք վարձավճարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 6
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 օգոստոսի 2026 թ. N 262-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 25-ՐԴ ՇԵՆՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Անահիտ Գավրուշի Բալասանյանի դիմումը (մտից N 1343, 04.05.2026 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 25-րդ շենքի հարևանությամբ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 40,4 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 40,4 քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 47,6 քմ) բնակելի նշանակության շինությունը (ավտոտնակ և նկուղ) համարել Ջերմուկ համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական. ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2026M4QQCF:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

ա) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

գ) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ձախափնյակ թաղամաս, 6-րդ փողոց N 20:

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Անահիտ Գավրուշի Բալասանյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 6
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 օգոստոսի 2026 թ. N 263-Ա

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հաշվի առնելով Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանի՝ ս/թ հուլիսի 22-ին էլեկտրոնային հարթակում մուտքագրված ՃՀԱ/705/21323-26 հայտը (մտից N 1365, 06.08.2026 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի քաղաքային ճոպանուղու աստիճանավանդակի տանիքածածկի կառուցման աշխատանքների կատարման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման նպատակով «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին տալ նախագծման թույլտվություն:

2.«ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 6
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 օգոստոսի 2026 թ. N 264-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊՄ-ԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 87-Ն որոշման 2-րդ կետի, հիմք ընդունելով «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊ ընկերության N 223-26 փորձաքննության եզրակացությունը և հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմ» ՊՄ-ի՝ էլեկտրոնային հարթակով ս/թ հուլիսի 27-ին ներկայացրած ՇԹԴ/705/19285-26 դիմումը (մտից՝ 2026 թվականի օգոստոսի 6-ի N 1366)՝ ***որոշում եմ՝***

1. «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմ» ՊՄ-ին տրամադրել Ջերմուկ քաղաքի Մաշտոցի փողոցի N 9 հասցեում գտնվող հողամասի վրա բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպության շենք կառուցման շինարարության թույլտվություն:

2. Կառուցապատողը շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված աշխատանքների շինարարության թույլտվության տրամադրման համար տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառել արտոնություն՝ զրոյական դրույքաչափ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմ» ՊՄ-ին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 6
Ջերմուկ